ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այգեվան համայնքի Համայնքապետի զեկույցը համայնքի ժողովի ընթացքում

11.07.2012թ.

Հարգելի Այգեվան համայնքի բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում ես Ձեզ կներկայացնեմ 2012թ. I կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին: Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի և տեղեկություններ համայնքում հուզող հիմնախնդիրների մասին:

Համայնքում հավաքագրվել է ընդամենը 9199.6հազար դրամ գումար որից՝

1.գյուղատնտեսական նշանակության հողի հարկ հավաքագրվել է 620.7հազար դրամ

2.գույքահարկ է հավաքագրվել 710.6հազար դրամ

3.հողի վարձակալության վարձավճար 195.7 հազար դրամ

4.համայնքի կողմից գանձվել է պետական տուրք 51.8 հազար դրամ

5.պետության կողմից տրվել է դոտացիա 7574.7 հազար դրամ:

Համայնքում կատարվել են հետևյալ ծախսերը և աշխատանքները:

1.վճարվել է 2012 թվականի I կիսամյակում աշխատավարձ 3947.8հազար դրամ

2.վճարվել է կենսաթոշակային ֆոնդի գումար 1061.6 հազար դրամ

3.համայնքի անապահով ընտանիքներին և պատերազմի վետերաններին տրամադրվել է օգնություն 1147.0 հազար դրամ

4. կատարվել է խորքային հորերի պոմպերի վերանորոգում 1163.0 հազար դրամ

5. պատերազմի վետերանների համար մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում 250.0 հազար դրամ

6.Կատարվել է համակարգչային ծառայության ծախսեր 56.6 հազար դրամ:

Ավարտվել է պետության կողմից գյուղի դպրոցի ներքին հարդարման և լոկալ ջեռուցման կաթսայատան շինարարության աշխատանքները:

Իմ կարծիքով բավականին աշխատանքներ են կատարվել 2012 թվականին I կիսամյակում, սակայն կան ևս մի քանի առաջնային խնդիրներ, որոնք կցանկանայի ի կատար ածվեր 2012թ II կիսամյակում՝

1.մշակույթի տան վերանորոգում
2.խմելու ջրագծի անցկացում

Համայնքի հարգելի բնակիչներ 2012թ. II կիսամյակի ընթացքում համայնքի առջև ծառացած խնդիրների լուծման և համայնքի վիճակը բարելավելու համար հաշվի կառնվեն Ձեր կողմից առաջ քաշված բոլոր տեսակի առաջարկություններն ու հիմնախնդիրները:

2012 թվականի բյուջեի կատարման և Ձեր կողմից առաջարկված կարևորագույն աշխատանքները կատարելու համար հարկավոր է Ձեր աջակցությունը՝ այն է ժամանակին կատարել Ձեր հարկային պարտավորությունները:

ԱՅԳԵՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Ս. ԷՔԻԶՅԱՆ